ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 հունիսի Շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

79
(2745)

քՐ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՀԱՐԿԵՐԻՑ ԽՈՒՍԱՓՈՂ ՔՊ-ԱԿԱՆԸ

ՔՊ խմբակցության պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյանը 2020թ.-ի պատերազմից հետո մի խայտառակ իրավիճակում է հայտնվել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վերջինս 44-օրյա պատերազմից ընդամենը մեկ տարի անց՝ 2021թ.-ին, դիմել է դատարան՝ իրեն պատկանող «Արմ-բիզնես» ՍՊԸ-ն սնանկ ճանաչելու համար, որպեսզի խուսափի հարկեր վճարելուց:

Ի դեպ, ՍՊԸ-ն գրանցված է հենց պատգամավորի բնակության հասցեում՝ Դավիթաշեն, 2-րդ թաղամաս, 40 շենք:

Ստացվում է՝ հետպատերազմական վիճակում գտնվող երկրում, երբ քաղաքացիները, հարկերը վճարելով, փորձում էին պատերազմից հետո թուլացած պետությունը, բանակը ոտքի կանգնեցնել, որեւէ օգուտ տալ, պատգամավորը, որը տնտեսության զարգացման ջատագովն է, բոլորին հորդորում է ժամանակին հարկերը վճարել, լրիվ հակառակն է անում. ինքը իր ՍՊԸ-ն փակում է՝ հարկերից խուսափելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով փորձեց մեկնաբանություն ստանալ պատգամավորից. վերջինս նախ ասաց, որ նիստի է մասնակցում, խնդրեց մի փոքր ուշ զանգել, իսկ դրանից հետո մեր բազմաթիվ զանգեր արդեն անպատասխան մնացին:

Գաղտնիք չէ, որ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը տարվա ընթացքում զբաղվում է միայն այս կամ այն երկիր այցելություններով, արձանագրային հայտարարություններ անելով: Եվ նաեւ դա է պատճառը, որ խորհրդարանում 2022 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվության նախագիծը ներկայացնելիս խայտառակ արդյունքի ականատես եղանք: Մասնավորապես, հաշվետվության մեջ նշվում է, որ նախագահը զբաղված է եղել քաղաքացիության տրման մասին հրամանագրեր, կոչումներ, շքանշաններ ու մեդալներ տալով: Շքանշաններով եւ մեդալներով պարգեւատրվել է 680 անձ: Նախագահի կողմից շնորհվել է 12 պատվավոր կոչում, 17 բարձրագույն դիվանագիտական աստիճան, 6 դասային աստիճան, 4 բարձրագույն զինվորական կոչում: Այսինքն՝ ստացվում է՝ միայն հրամանագիր ստորագրելու, կոչում տալու համար մոտ 3 մլն դոլարի բյուջետային հատկացում է արված եղել նախագահի աշխատակազմին, որպեսզի լավ ստորագրի, մեկնի գործուղումների եւ ձեռքի հետ էլ հայտարարի, թե մենք ենք ագրեսոր երկիր, եւ պատերազմի մեղքը մերն է: Մեկ այլ ուշագրավ հանգամանք եւս Վահագն Խաչատուրյանի գործունեությունից. պարզվում է՝ նրա մոտ եւս կադրերի պակաս է: Չնայած 2022 թվականի մարտի 13-ին Վահագն Խաչատուրյանը երդմնակալությամբ ստանձնեց նախագահի պաշտոնը, սակայն նա այդպես էլ աշխատակազմի ղեկավար չունի: Եվ հենց դա է պատճառը, որ երեկ նախագահի աշխատակազմի հաշվետվությունը ներկայացնում էր նրա տեղակալ Պողոսյան Խաչիկը: Վերջինս, նկատենք, Շիրակի փոխմարզպետն է եղել ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի իշխանության տարիներին:



Երկուշաբթի օրը՝ հունիսի 5-ին, արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը կգնա խորհրդարան: Տեւական ժամանակ է՝ ՔՊ-ականներն անհամբեր սպասում են, որ հանդիպեն Միրզոյանի հետ, քանի որ վերջինս գործադիր տեղափոխվելուց հետո իր կապը խզել է ՔՊ-ական պատգամավորների հետ, անգամ հրաժարվել է դառնալ ՔՊ վարչության անդամ, որպեսզի խմբակցության իր թիմակիցների հետ հնարավորինս քիչ շփվի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ -ականները երկուշաբթի պատրաստվում են հարցախեղդ անել նրան, որպեսզի հասկանան՝ ի վերջո ինչ բանակցություններ է վարում Հայաստանն Ադրբեջանի հետ: ՔՊ-ամերձ մեր աղբյուրների փոխանցմամբ՝ խմբակցության ներսում ներքին քննարկումներ կան, որ պետք է Միրզոյանին այդ օրը սեղմեն, որ խզել է կապը թիմակիցների հետ:

«Ցեղասպանության ճանաչումը՝ օդի մեջ, բան չի տալիս մեզ, բացի բարոյական շոյվածությունից». այս խոսքերի հեղինակը Սփյուռքի հարցերով հանձնակատար Զարեհ Սինանյանն է, որը բավականին շատ է սիրում մեկնել գործուղումների, այլ կերպ ասած՝ ճամփորդել՝ պետբյուջեի հաշվին, սակայն նախկին սփյուռքահայը ցեղասպանության ճանաչման հարցն անիմաստ մի բան է համարում: Բայց այդ գաղափարի կրող պաշտոնյան միայն 2022 թվականին 13 գործուղման է մեկնել տարբեր երկրներ: 2022 թվականին կառույցին հատկացվել է 578 մլն 945 հազար դրամ: Այս տարի եւս Զարեհ Սինանյանն ակտիվ ճամփորդող է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նախորդ ամիս նա մեկ շաբաթով Գերմանիայում է եղել, ապրիլ ամսին նա ութ օրով Իսպանիայում էր: Ամենաուշագրավ գործուղումը եղել է փետրվարին. նա փետրվարի 17-ից մինչեւ մարտի 2-ը եղել է ԱՄՆ-ում: Հիշեցնենք, որ մինչ Հայաստանում պաշտոն ստանալը Սինանյանը ԱՄՆ-ում էր բնակվում, իսկ հիմա էլ ԱՄՆ է մեկնում՝ պետբյուջեի հաշվին:

ԱՐՁԱԳԱՆՔ

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ՝ ԿԱՍԿԱԾԻ ՏԱԿ

«Ժողովուրդ» օրաթերթը վերջին օրերի՝ Նիկոլ Փաշինյանի աղմկահարույց ելույթների մասին զրուցել է սահմանադրագետ Վարդան Պողոսյանի հետ:

-Վերջերս վարչապետ Նիկոլ Փաշինյանը ԱԺ ամբիոնից մի այնպիսի հայտարարություն արեց, որը տարբեր մեկնաբանությունների առիթ տվեց. ասում է՝ մենք ապրում ենք մի անպիսի երկրում , որը «կադաստրի վկայական» չունի: Թեեւ գիտենք, որ Հայաստանը ՄԱԿ-ի կողմից ճանաչված պետություն է, շուրջ 100-ից ավելի պետություններ ճանաչել են մեր տարածքային սահմանները, բայց Փաշինյանի ասածից ստացվում է, որ Ադրբեջանը պետք է մեզ վկայական տա, որպեսզի մեր սահմանները ճանաչվեն: Ի՞նչ կասեք այս մասին:

-Փաշինյանը պարզապես անգրագետ է, դավաճան, ով չի հասկանում՝ ինչ է խոսում, եւ որոշել է հերոս ձեւանալ՝ պնդելով, որ մինչ այսօր Հայաստան գոյություն չունի, եւ ինքը հիմա Ալիեւից ստանալու է այդ «կադաստրի վկայականը»: Բնականաբար, այդ պնդումը որեւէ հիմք չունի՝ ո՛չ իրավական, ո՛չ պատմական: Սա վկայում է միայն այն մասին, որ Փաշինյանը իսկապես բռնել է Հայաստանը կործանելու ճանապարհը: Ուրիշ մեկնաբանություն դժվար է տալ այնպիսի մի հայտարարության, որը, չեմ կարծում, որեւէ առողջ բանականություն ունեցող մարդ, առավել եւս՝ երկրի վարչապետ, կարող էր անել սեփական երկրի հետ կապված:

-Ըստ Ձեզ՝ Փաշինյանը իր այս հայտարարությամբ արդյոք կասկածի տակ չի՞ դնում, նախ, մեր տարածքային սահմանները, ու հնարավորություն չի՞ տալիս, որպեսզի Ադրբեջանը հետագայում տարածքային նոր պահանջներ ներկայացնի մեզ:

-Նա ոչ միայն կասկածի տակ է դնում մեր սահմանները, այլեւ Հայաստանի Հանրապետությունն ինքնին: Այսինքն՝ եթե ասում է, որ մենք էստեղ՝ էս տարածքում, տնվոր ենք, դրանից ուղղակիորեն բխում է, որ այլ պետություններ իրավական հավակնություններ ունեն այն տարածքի նկատմամբ, որտեղ մենք այսօր բնակվում ենք: Սրանով կասկածի տակ է դրվում Հայաստանի Հանրապետության գոյությունը, ոչ թե սահմանը. մի քիչ այս կողմ կամ այն կողմ է, իհարկե, դա էլ շատ կարեւոր է, բայց էստեղ ավելի մեծ խնդիր կարող է առաջանալ՝ կա՞ Հայաստանի Հանրապետություն, թե՞ չկա՝ ըստ Փաշինյանի:

-Ձեր թույլտվությամբ՝ կխնդրեմ անդրադառնալ եւս մեկ հայտարարության: Գիտենք, որ ասուլիսի ընթացքում հայտարարեց, որ եթե, ի վերջո, Հայաստանը եւ Ադրբեջանը համաձայնության գան, եւ խաղաղության պայմանագիրը կնքվի, ու միմյանց տարածքային ամբողջականությունը ճանաչեն, Արցախը ճանաչվելու է որպես Ադրբեջանի մաս, ու ոչ միայն Արցախը, այլեւ անկլավները: Սա իրենից ի՞նչ է ենթադրում՝ ըստ Ձեզ, եւ ի՞նչ սպառնալիքներ կարող է ներկայացնել:

-Նորից որեւէ առնչություն չունի Փաշինյանի ասածը միջազգային իրավունքի հետ: Տարածքային ամբողջականության ճանաչումը երբեւէ չի նշանակում, որ դու ճանաչում ես տվյալ երկրի սահմանները, եթե դրա վերաբերյալ չկա հատուկ հայտարարություն: Երկու երկրների միջեւ սահմանները սահմանում են միայն երկու երկրները իրար մեջ կնքած պայմանագրով, եւ այդ տարածքային ամբողջականության վերաբերյալ հարցը որեւէ առնչություն չունի Արցախի տարածքային պատկանելիության հետ, եւ, ըստ էության, Փաշինյանն իր այդ հայտարարությամբ կասկածի տակ է դնում ոչ միայն Արցախի Հանրապետության գոյությունը՝ ուղղակիորեն պնդելով, որ Արցախի Հանրապետություն չկա, եւ դա ադրբեջանական տարածք է, այլեւ կասկածի տակ է դնում Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, որովհետեւ ՀԽՍՀ տարածք այլեւս գոյություն չունի: Գոյություն ունի ՀՀ տարածք, որի մեջ մտնում են, այսպես կոչված, ադրբեջանական նախկին անկլավները:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆՀԵՏԱՑԵԼ Է

Ո՞ՒՐ Է ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԸ

«Վերածնվող Հայաստան» կուսակցության նախագահ, ԱԺ նախկին պատգամավոր Վահե Հակոբյանը, որը նախկինում բավականին ակտիվ մասնակցում էր քաղաքական գործընթացներին, շատ սուր քննադատում էր Նիկոլ Փաշինյանին եւ իշխանության մյուս ներկայացուցիչներին, անհասկանալի պատճառներով վերջին շրջանում պասիվացել է, քաղաքական որեւէ գործընթացների չի մասնակցում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վերջինս բացակայում է երկրից ու պատգամավորական մանդատը վայր դնելուց հետո սկսել է շատ զգուշավոր լինել իշխանությունների հետ կապված ցանկացած հարցում:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 29-ին Վահե Հակոբյանը հայտարարեց, որ հրաժարվում է պատգամավորական մանդատից, ու հեռացավ խորհրդարանից:

««Վերածնվող Հայաստան» կուսակցությունը շարունակելու է իր գործունեությունը ընդդիմադիր դաշտում՝ կուսակցության հռչակած արժեքների ու քաղաքականության շրջանակներում»,-հեռանալուց հետո նման հայտարարություն էր արել Վահե Հակոբյանի ղեկավարած կուսակցությունը: Իսկ ո՞ւր է այս պահին Վահե Հակոբյանը, ինչո՞ւ նրա ղեկավարած կուսակցությունը որեւէ ակտիվ աշխատանքով զբաղված չէ: Մենք փորձեցինք այս հարցերի շուրջ զրուցել Վահե Հակոբյանի հետ:

Պարզվեց՝ Հակոբյանը շատ ագրեսիվ է տրամադրված, ու հայտարարեց, թե մեր հարցերին չի ցանկանում պատասխանել:

«Ես Հայաստանում եմ, ոչ մի տեղ չեմ մեկնել, իսկ եթե իմ ակտիվության մասին եք ուզում իմանալ, կարող եք մտնել «Վերածնվող Հայաստան» կուսակցության էջ, ամեն ինչ պարզ կերեւա»,-ասաց Վահե Հակոբյանը՝ անջատելով հեռախոսը:

Թե ինչու է Վահե Հակոբյանը նման վարք ցուցաբերում, դժվար է ասելը, բայց այն, որ նա անհետացել է քաղաքական դաշտից ու, որպես ընդդիմություն, չի քննադատում ներկայիս իշխանության վարած քաղաքականությունը, ակնհայտ է:

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱՐ ԵՆ ԽԱՌՆՎԵԼ

ՀՀ գլխավոր դատախազությունը, թերեւս վախենալով Armlur.am-ի բացառիկ տեսանյութի հրապարակումից, որտեղ ՆԳՆ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի քրեականի պետ Ա.Ղայթմազյանը ծեծում է անչափահաս տղային, որոշեց վերացնել քրեականի պետի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու որոշումը: Դատախազությունը այս քայլով փորձեց արդար ձեւանալ, թե որոշում վերացնելով՝ իր կառույցում առկա վիճակը կարգավորվեց, մինչդեռ անչափահասին ծեծելու գործը փակելու համար առնվազն պետք է համակարգից հեռացվի Տավուշի մարզի դատախազ Գոռ Ալոյանը, քանի որ իր ենթակա դատախազի հետ նման որոշում է կայացրել՝ ազդարարելով, թե քրեականի պետի արարքի մեջ հանցակազմ չկա:

Ավելին՝ Տավուշի մարզի դատախազ Ալոյանը ինքն է օրինականությունը ստուգելու համար կից գրությամբ ուղարկում գործերը գլխավոր դատախազություն:

Այստեղ հարց է առաջանում՝ արդյոք կարճված վարույթը արդեն իսկ ուղարկված չի եղել Գլխավոր դատախազություն՝ օրինականության ստուգման: Այս իրավիճակում մի ուշագրավ հանգամանք էլ կա. որոշման վերացնելուց բացի, պետական շահերի պաշտպանության գործառույթի շրջանակներում ստուգում են նշանակել «Հաղարծին» հյուրանոցային համալիրում աշխատանքում անչափահասների ներգրավման հարցը պարզելու համար, ինչը ոչ մի կապ չունի դատախազության լիազորությունների հետ: Պարզ երեւում է, որ դատախազությունում խառնվել են իրար եւ ընկել են հյուրանոցի տնօրինության հետեւից՝ կարծելով, թե նրանք են մեզ տրամադրել աղմկահարույց տեսաձայնագրությունը: Սա առավել ցայտուն է դարձնում, որ գործը փակվել է դատախազության նախաձեռնությամբ, եւ զայրացած են, որ սեւերես դարձան հրապարակումից հետո:

Հիշեցնենք, որ հունիսի 1-ին հրապարակեցինք բացառիկ տեսանյութ, որտեղ Դիլիջանի քրեականի պետ Արսեն Ղայթմազյանը ծեծում է անչափահաս տղային: Դեպքի առթիվ հարուցվում է քրեական վարույթ, որն ավելի ուշ կարճվում է, քանի որ պետը զղջում է, որ նման բան է արել: Մեր աղմկահարույց հրապարակումից հետո կարճված գործը վերաբացվեց, քրեականի պետի լիազորությունները դադարեցվեցին, ու նրա նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցվեց:

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԵՑ

Երեկ Հայաստան է ժամանել Եվրոպական խորհրդի Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հարցերով աշխատանքային խմբի պատվիրակությունը:

Պատվիրակությանը ընդունել է Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը:

Պատվիրակությունը Հայաստանում կլինի միմչեւ հունիսի 4-ը:

Պատվիրակության ընդունելությունը կկազմակերպվի պետական բյուջեով Ազգային ժողովին այդ նպատակի համար հատկացված միջոցների հաշվին:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԿՐՔԵՐԸ՝ ԲՐՅՈՒՍՈՎՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունն է ահազանգել Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողուհի Մանե Արշակյանը:

Մեր զրուցակցի խոսքով՝ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Գյուրջինյանն իր վարչական կազմով արշավ է սկսել այն ուսանողների դեմ, որոնք համակարծիք չեն իրենց հետ:

-Մի քանի ամիս առաջ, երբ Դավիթ Գյուրջինյանը նշանակվեց ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, ուսանողական խորհրդի շատ անդամներ հրաժարական տվեցին: Դրանից մի քանի շաբաթ հետո ռեկտորի կողմից որոշվեց, որ ՈՒԽ-ն պետք է գնա ընտրությունների: Ստեղծվեց հանձնաժողով՝ կազմված 5 ուսանողից եւ 5 ռեկտորատի անդամից: Դրանից հետո, երբ որ ուսանողները իրենց դիմումները ներկայացրին, մի քանի հոգու հայտ դիտարկվեց վիճարկելի, որոնցից մեկն իմն էր, քանի որ ես առաջին կուրսի ուսանող էի, ու այդ ընտրական խորհուրդը որոշեց, որ իմ հարցը պետք է դրվի քննարկման: Քննարկում իրականացնող ուսանողական ընդհանուր ժողովը՝ 25/1 հարաբերակցությամբ, այսինքն՝ 180 ուսանող պետք է մասնակցի այդ ամենին: Քանի որ սեպտեմբերին նախկին ուսանողական խորհուրդը պետք է էդ ամեն ինչը աներ, բայց չէր արել, ընտրական հանձնաժողովը էդ ամենը վերցրեց իր ուսերին: Սկսեցին հավաքագրել ուսանողներին: Առաջին օրը արդյունքի չհասան, երկրորդ օրը ուսանողության շրջանում հավաքագրեցին: Հաջորդ օրը, երբ որ հրավիրվեց ընդհանուր ժողովի նիստ (կանոնադրությամբ էսպես է՝ ամենաքիչը 91 հոգի պետք է մասնակցի, որ վավեր համարվի ամեն ինչը), մասնակցեցին 44 հոգի, որը նույսիկ 25%-ն էլ չի կազմում ընդհանուր ժողովի, ու դրեցին ընդհանուր քննարկման 4 ուսանողի հարց, որոնցից մեկը ես էի: Այն պատճառաբանությամբ, որ ես առաջին կուրսի ուսանող եմ, իմ նախագահության թեկնածու լինելու հայտը մերժվեց, իսկ ինձնից առաջ քննարկվել է մի աղջկա հարց, որը էլի առաջին կուսրեցի էր՝ այլ ֆակուլտետից: Իրեն հաստատում են, ու չի խանգարում այն հանգամանքը, որ առաջին կուրսի ուսանող է: Ես ենթադրում եմ, որ քանի որ վերջին շրջանում ուսանողական խորհրդի ու ռեկտորի հարաբերությունները լարված էին՝ կապված ժամանակավոր պաշտոնակատարի լիազորությունների հետ (ուսանողները դժգոհում էին, եւ մենք ուսանողների կողքին էինք), դրա համար բուհի վարչակազմը ինչ-որ ապօրինի գործընթացներ է սկսել մեր դեմ եւ չի լսում ուսանողների ձայնը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ՝ ՄՈԼԴՈՎԱՅՈՒՄ

Նիկոլ Փաշինյանը ցանկանում է որոշես Հայաստանի Հանրապետության վարչապետ հասնել նրան, որ ապագա սերունդներին թողնի ՀՀ կադաստրի լրացված եւ ամբողջական վկայական:

Փաշինյանն այս մասին ասաց «Մանուկ Բեյի» պալատում Մոլդովայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը:

«Մենք խոսում ենք տարածքային ամբողջականության ճանաչման մասին եւ քայլ-քայլ գնում ենք»,-ասաց Փաշինյանը:

Իսկ թե ինչու է այդպես անում, վարչապետը հիշեցրեց, որ վերջերս «կադաստրի վկայականի» հետ կապված՝ ԱԺ-ում կատարած իր հայտարարությունը բանավեճի տեղիք է տվել:

«Ես շատ ուզում եմ, որ, որպես ՀՀ վարչապետ, հասնեմ մի արդյունքի, որ մեր ապագա սերունդներին թողնեմ Հայաստանի Հանրապետության կադաստրի լրացված եւ ամբողջական վկայական»,-ասաց Փաշինյանը:

Ըստ Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ ոչ թե պետք է մտածել, թե ով կերաշխավորի Հայաստանի անվտանգությունը, այլ պետք է մտածել, թե ինչը կերաշխավորի այդ անվտանգությունը. անվտանգություն ապահովողը խաղաղությունն է:

Վարչապետը նշեց, որ ՀՀ-ն վերջին 2 տարում մեծ տնտեսական դինամիկա ունի: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մասով լուրջ առաջընթաց է գրանցվում:

«Ես համոզված եմ, որ եթե մենք կարողանանք մարդկանց համար գործունեության պատշաճ պայմաններն ապահովել, Հայաստանը շատ արագ կզարգանա: Այդ զարգացման նպատակը պետք է լինի մարդու բարեկեցությունը, երջանկությունն ու անվտանգությունը»,-ասաց վարչապետը:

Փաշինյանը վստահեցրեց է, որ չկա այնպիսի անկլավ, որը երկրի համար կարող է ճանապարհային անլուծելի խնդիր առաջացնել:

Փաշինյանն այս մասին ասաց՝ անդրադառնալով հարցին՝ 1975 թ.-ի քարտեզով Տիգրանաշենը Հայաստանինն է արդյոք, թե Ադրբեջանինը:

«Քաղաքական մակարդակով՝ մենք ելնում ենք այն կանխավարկածից, որ այնտեղ եղել է «Քյարքի»: Մենք ասում ենք, որ պետք է իրավական հիմքերը նայենք: Քաղաքական առումով, եթե կպարզվի, որ այդ քարտեզով Ադրբեջանինն է, մենք ոչ մի խնդիր չունենք»,-ասաց Փաշինյանը: Ըստ վարչապետի՝ դեռ փաստ չէ, որ Ադրբեջանը կուզի՝ Արծվաշենը վերադարձնի եւ Տիգրանաշենը վերցնի: Փաշինյանը ցանկանում է, որ այդ հարցի արժեքը չգերագնահատվի:

«Այնպիսի անկլավ չկա, որը մեզ համար առաջացնի ճանապարհային այնպիսի խնդիր, որն անլուծելի է: Չկա այդպիսի հարց: Եթե ճանապարհն, օրինակ, այսպես չի կարող անցնել, այնպես կանցնի: Ոչ մի խնդիր չկա: Իրականում մենք մեր ճանապարհային ցանցն այսօր էլ Հանրապետությունում այնքան ենք զարգացնում, որ այդպիսի անլուծելի խնդիր չկա»,-ասաց Փաշինյանը:

Վարչապետի կարծիքով՝ այդ անկլավների հարցով շատ թեմաներ օգտագործում են Հայաստանի հանրության վրա հոգեբանական ազդեցություն գործելու համար:

«Մենք ասում ենք, որ քաղաքական մակարդակում անկլավներն ընդունում ենք, իրենք էլ ընդունում են Արծվաշենը: Արծվաշենն էլ է անկլավ: Ենթադրենք, Ադրբեջանն ուզում է դա, ուրեմն մենք էլ վերցնում ենք Արծվաշենը»,-նշեց նա:

Վարչապետը հավելեց՝ շատ հարցեր կան. օրինակ՝ թե քաղաքացիներն այդ ճանապարհը ոնց պետք է անցնեն. բազմաթիվ հարցեր պետք է համաձայնեցվեն: Վարչապետը հորդորեց թույլ չտալ, որ այդ թեման հոգեբանական ազդեցություն գործելու համար գործիք դառնա:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԳՆՈՒՄՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

Կառավարության քաղաքականության արդյունքում մեկ անձից գնումներ կատարելու դեպքերը նվազել են. Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի ու ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստի ժամանակ այս մասին ասաց Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

«Նախկինում մեկ անձից գնումների որոշումները կայացնում էր Կառավարությունը, հիմա փոխել ենք կարգը, եւ մեկ անձից գնումների որոշումն իր պատասխանատվությամբ իրականացնում է գերատեսչության ղեկավարը: Այս քաղաքականության փոփոխության արդյունքում ունենք մեկ անձից գնումների նվազում: Հաշվի առնելով այն պատասխանատվությունը, որ կոնկրետ ղեկավարը կրում է ամեն մի որոշում կայացնելու համար, այստեղ տեսնում ենք ներքին կարգերի վերահսկողության ավելի ուժեղացում»,- ասաց ֆինանսների նախարարը:

Վահե Հովհաննիսյանը հայտնեց, որ մրցակցային ընթացակարգերով կատարվող գնումների ծավալը 2022 թվականին եղել է 49,1 տոկոս այն դեպքում, որ ելակետային ցուցանիշը 34,4 տոկոս էր, իսկ թիրախային ցուցանիշը, որին պետք է հասնեին 2024 թվականին, եղել է 47 տոկոս: Նրա խոսքով՝ գնումների գործընթացին մասնակիցների միջին թիվը 2,7 է:

«Պետք է հաշվի առնել, որ երբ խոսում ենք ոչ մրցակցային գնումների մասին, այստեղ մի մեծ զանգված է այնպիսի ծառայությունների գնումը, որոնք ունեն մեկ մատակարար, օրինակ՝ ջուր, գազ, էլեկտրաէներգիա եւ այլն»,- ասաց ֆինանսների նախարարը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը հունիսի 2-ին հանդիպել է Ազգային ժողովի պատգամավորների հետ:

Ինչպես հայտնում է Արցախի նախագահի աշխատակազմը, Արայիկ Հարությունյանը ներկայացրել է Արցախի շուրջ ձեւավորված ռազմաքաղաքական վերջին զարգացումները, անդրադարձել Հայաստան-Ադրբեջան բանակցային գործընթացին, խոսել ստեղծված իրավիճակում գործադիր իշխանության քայլերի մասին: Նախագահ Հարությունյանը պատասխանել է ներքին ու արտաքին հիմնախնդիրների վերաբերյալ պատգամավորների՝ շուրջ երկու տասնյակ հարցերին: Տեղի է ունեցել մտքերի փոխանակություն՝ համատեղ անելիքների շուրջ:

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

2023 թվականի հունիսի 2-ին, Տավուշի մարզի դատախազի որոշմամբ, վերացվել է Ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Ա. Ղայթմազյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում չհարուցելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին որոշումը:

Նույն օրը Տավուշի մարզի դատախազության դատախազի կողմից վարույթն իրականացնող քննիչին տրվել է հանձնարարություն՝ քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձա-նագրության մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ՝ ենթադրյալ հանցանքի փաստական նկարագրությունը եւ տրված իրավական գնահատականը շտկելու համար, ինչը կատարվել է:

Դատախազի որոշմամբ՝ Ոստիկանության Դիլիջանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Ա. Ղայթմազյանի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (անչափահասին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), այն բանի համար, որ Ա. Ղայթմազյանը 2023 թվականի ապրիլի 10-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, գտնվելով Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի «Հաղարծին» ռեստորանային եւ հյուրանոցային համալիրում, անհիմն վիճաբանության մեջ է մտել ռեստորանի աշխատակից, անչափահաս Ա.Ա.-ի հետ, ձեռքի ափերով բազմաթիվ հարվածներ է հասցրել Ա.Ա.-ի գլխի եւ մարմնի տարբեր մասերին՝ անչափահասին պատճառելով ուժեղ ֆիզիկական ցավ:

Դատախազի կողմից վարույթն իրականացնող քննիչին տրվել է նաեւ հանձնարարություն՝ Ա. Ղայթմազյանին մեղադրանք ներկայացնելու, ազատության մեջ գտնվող մեղադրյալին ձերբակալելու եւ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարան միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ:

Տրված հանձնարարությամբ պահանջվել է քննության առարկա դարձնել բոլոր հնարավոր վարկածները, պարզել տեղի ունեցածի իրական պատճառները, ինչպես նաեւ քննության առարկա դարձնել անչափահաս տուժողի՝ նշված համալիրում աշխատելու իրավական հիմքերը:

Միեւնույն ժամանակ, դատախազի կողմից, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորությունների շրջանակում, «Հաղարծին» ռեստորանային եւ հյուրանոցային համալիրում սկսվել է ուսումնասիրություն, ի թիվս այլնի, անչափահասներին աշխատանքի ընդունելու օրենքով սահմանված կարգի հնարավոր խախտումները վեր հանելու եւ իրավական գնահատականի արժանացնելու նպատակով:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում էր հայտնվել տեսանյութ, որտեղ Ներքին գործերի նախարարության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի քրեականի պետը հյուրանոցներից մեկում ծեծի է ենթարկում 16-ամյա անչափահաս տղային:

ՔՐԵԱԿԱՆ

ՄԱՀԱՑՈՂՆԵՐԸ ՀՅՈՒՐ ԷԻՆ

Հունիսի 1-ին Երեւան քաղաքում կնոջ կողմից իր մանկահասակ երեխայի հետ շենքից ցած նետվելու դեպքի առթիվ քրեական վարույթ է նախաձեռնվել:

2023թ. հունիսի 1-ին՝ ժամը 12:25-ին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնից հաղորդում է ստացվել, որ Երեւան քաղաքի Սվաճյան փողոցի շենքերից մեկի հարկերից մեկից մայրը եւ երեխան ընկել են:

Պարզվել է, որ Երեւան քաղաքի Հարավ-Արեւմտյան թաղամասի 29-ամյա բնակչուհին, որպես հյուր գտնվելով Սվաճյան փողոցի նշված շենքի 6-րդ հարկի բնակարաններից մեկում, ննջասենյակի պատուհանից իր մոտ 11-ամսական տղայի հետ ցած ներտվելու եղանակով ինքնասպան է եղել:

Նույն օրը՝ ավելի ուշ, «Սուրբ Աստվածամայր» ԲԿ-ից ահազանգ է ստացվել, որ նշված շենքի բակից իրենց մոտ տեղափոխված երեխան, գիտակցության չգալով, մահացել է:

Դեպքի առթիվ նույն օրը ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով (սպանություն) եւ 162-րդ հոդվածի 1-ին մասով (ինքնասպանության հասցնելը), նախաձեռնվել է քրեական վարույթ:

Կատարվել է դեպքի վայրի զննություններ: Նշանակվել են դիակի դատաբժշկական փորձաքննություններ:

Որպես վկա հարցաքննվել են կնոջ մերձավոր ազգականները, դեպքի վայր հանդիսացող շենքի բնակիչները:

Նախաքննությունը շարունակվում է, միջոցներ են ձեռնարկվում տեղի ունեցած պատճառները, հանգամանքները բացահայտելու ուղղությամբ:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ

Մայիսի 24-ին հայտնի դարձավ, որ կաշառք ստանալու մեղադրանքով ձերբակալվել են ԵՊՀ տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը, նրա տեղակալը, նույն ֆակուլտետի երկու դասախոսներ՝ Գագիկ Տոնոյանն ու Արմեն Ներսիսյանը: «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի հետ՝ պարզելու համար, թե ինքը, լինելով ԿԳՄՍ նախկին նախարար, տեղյակ չի եղել արդյոք, թե կրթության ոլորտում ինչ է կատարվում:

Հիշեցնենք, որ երեկ գրել էինք, որ ԵՊՀ-ի մեր աղբյուրները փոխանցեցին, որ Հայկ Սարգսյանին մեկ ամիս ժամանակ էր մնացել պաշտոնավարելու. առաջիկայում նոր դեկանի ընտրություններ պետք է լինեին:

Վերջինս նախապես տեղյակ է եղել, որ իր վերաբերյալ համալսարանից տեղեկություններ են փոխանցում իրավապահ մարմիններին, ու շուտով գալու են իր «հետեւից», ուստի որոշել է նախապես իր անունը մաքրելու համար չառաջադրվել դեկանի նոր ընտրություններին եւ հնարավորինս շուտ հեռանալ ԵՊՀ-ից, որպեսզի սկանդալի մեջ չհայտնվի:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱԶԱՏՎԵՑԻՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻՑ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի հրամանով՝ զբաղեցրած պաշտոններից նախօրեին ազատվել են ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետ Գառնիկ Մաթեւոսյանը եւ նույն ստորաբաժանման պետի տեղակալներ Արտակ Մկրտչյանը եւ Արմեն Մուրադյանը:

ՔԿ նախագահի մեկ այլ հրամանով՝ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալ Նարեկ Շահինյանը գործուղվել է ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին ստորաբաժանման աշխատանքները կազմակերպելու նպատակով:

ԹՄՐԱՆՅՈՒԹ

ԱՆՀԱՆԳՍՏԱՑՆՈՒՄ Է

Մայիսի 3-ին Ազգային ժողովում ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաջանյանը հայտարարել էր, որ որեւէ միջին վիճակագրական խնջույք առանց թմրանյութերի չի անցնում, եւ հարց էր ուղղել ՆԳ նախարար Վահե Ղազարյանին, թե ինչով է պայմանավորված այն հանգամանքը, որ ոստիկանական ռեյդերն անցկացվում են որոշակի ենթամշակութային առանձնահատկություն ունեցող ժամանցի վայրերում:

Ի պատասխան՝ Վահե Ղազարյանը նշել էր, որ իրենք օպերատիվ ստացված տվյալների հիման վրա են ռեյդեր իրականացնում եւ ուղղակի պարտավոր են արձագանքել այդ օպերատիվ տեղեկություններին: «Դրանով մենք մեծ խոչընդոտ չենք հանդիսացել տվյալ տնտեսվարողին:

Ինձ թվում է՝ մենք կատարել ենք մեր գործառույթները, կարեւորը մենք ունենք արդյունք. այ եթե չունենային արդյունք, դա հարցի մյուս կողմն է»,- ասել էր նա՝ ընդգծելով, որ ոստիկանության գործողությունների իրավաչափության հարցով գործընթաց կա:

«Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանից հետաքրքրվել է, թե վերջին անգամ երբ է խնջույքի մասնակցել եւ ինչ թմրանյութ է օգտագործել:

-Վերջին անգամ խնջույքի մասնակցել եմ մեկ շաբաթ առաջ. թմրանյութ չի եղել իսկ թմրանյութի օգտագործման մասին հարց, կարծում եմ, անտեղի է տալ:

Խոսելով Հայաստան նեմուծված մեկ տոննա հերոինի մասին՝ Հարությունյանը նշեց.

-Ամբողջը եթերով է եղել՝ եւ՛ բացահայտումները, եւ՛ դրա վերաբերյալ տեղեկատվությունը: Քննություն է գնում: Շատ է անհանգստացնում ինձ այս ամենը, եւ մենք՝ վարչապետի գլխավորությամբ, բազմիցս քննարկումներ ենք ունեցել, տրվել են հանձնարարականներ: Կարծում եմ՝ վերջին շրջանի բացահայտումների ավելացումը կապված է նաեւ այդ հանձնարարականների հետ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 1-ից 2-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 53 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԴ

5 ԵՐԵԽԱՆԵՐ՝ «ՍՕՍ–ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂ»–ՈՒՄ

Մայիսի 25-ին՝ Ժամը 02:25-ի սահմաններում, ոստիկանության Իջեւանի բաժին ահազանգ է ստացվել, որ Իջեւան խոշորացված համայնքի սահմանամերձ Սեւքար գյուղի եկեղեցուն հարակից «Եղեւնիներ» վայրում ծառից կախված դի կա: Ոստիկաններն ու քննիչները ծառից կախված հայտնաբերել են 17-ամյա Սյուզաննա Տորիաշվիլիի դին. աղջկա մոտ հայտնաբերվել է նամակ՝ ուղղված մորը:

Սեւքարի բնակիչներն ասում են, որ մորն ուղղված նամակում աղջիկը մոր հանդեպ իր ջերմ զգացմունքի մասին է գրել: Ծառից կախված աղջիկը ընտանիքի 7 զավակներից մեկն էր, ընտանիքի հայրը ազգությամբ վրացի է: Ընտանիքը Սեւքար գյուղում վերաբնակվել է Իջեւան համայնքի սահմանամերձ Կիրանց գյուղից, բարեգործները բազմազավակ այդ ընտանիքի համար Սեւքարում առանձնատուն եւ տան գույք են գնել: Ընտանիքի 7 երեխաներից ավագն աղջիկ է, որն ամուսնացել է Իջեւան համայնքի գյուղերից մեկում, Սյուզաննան եղել է ամուսնացած քրոջից տարիքով փոքր, ընտանիքի մյուս երեխաներից՝ տարիքով մեծ: Սյուզաննան օգնել է բազմազավակ, կարիքավոր ընտանիքի հոգսերը հոգալուն, մանավանդ որ ընտանիքի 7 երեխաներից մեկը մանկահասակ է:

Ընտանիքի հայրը՝ Մամուկա Տորիաշվիլին, բանվորական աշխատանքներ է կատարել Ռուսաստանում, հետո վերադարձել է Սեւքար, նախկինում վարձով ուրիշների ոչխարների հոտն է պահել: Ընտանիքի մայրը՝ Շաքե Ռզյանը, տարբեր աշխատանքներ է կատարել, սննդի օբյեկտներում մատուցող է աշխատել: Սյուզաննան դպրոցում միջին առաջադիմություն է ունեցել, նա 2021 թվականին թողել է ուսումը Սեւքարի դպրոցում:

Խեւքարի բնակիչները նշում են այդ ընտանիքի ոչ միայն կարիքավոր, այլ ավելի շատ անկազմակերպ լինելը, չհամախմբվածությունը: Իջեւան խոշոր համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության օրը, որոշում է ընդունել Տորիաշվիլի ընտանիքի երեխաների խնամքի վերաբերյալ:

Համայնքի ղեկավարը, հաշվի առնելով, որ Իջեւան համայնքի Սեւքար բնակավայրի՝ Շաքե Ռզյանի եւ Մամուկա Տորիաշվիլիի ընտանիքը գտնվում է կյանքի դժվարին իրավիճակում, որի հետեւանքով ընտանիքի 5 անչափահաս երեխաները՝ 2010թ. մարտի 29-ին ծնված Մանե Տորիաշվիլին, 2014թ. հուլիսի 14-ին ծնված Անգելինա Տորիաշվիլին, 2013թ. հուլիսի 11-ին ծնված Դավիթ Տորիաշվիլին, 2016թ. մայիսի 4-ին ծնված Դանիել Տորիաշվիլին, 2021թ. հոկտեմբերի 6-ին ծնված Էդմոն Տորիաշվիլին, գտնվում են հոգեբանական բարդ իրավիճակում, ծնողները չեն կարողանում իրականացնել երեխաների հետագա խնամքը ընտանիքում, ինչպես նաեւ ելնելով համայնքի խնամակալության եւ հոգեբարձության հանձնաժողովի դրական եզրակացությունից, որոշել է Սեւքարի բնակիչներ Շաքե Ռզյանի եւ Մամուկա Տորիաշվիլիի անչափահաս երեխաների՝ Մանե, Անգելինա, Դավիթ, Դանիել, Էդմոն Տորիաշվիլիների հետագա խնամքը «ՍՕՍ-Մանկական գյուղերի» «Իջեւան» մասնաճյուղի կարճաժամկետ կենտրոնում իրականացնելու նպատակով դիմել մասնաճյուղի տնօրինությանը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՎԱՐՏՎԵՆ 2026Թ.–ԻՆ

Մեղրիի սահմանային անցակետի վերակառուցման եւ արդիականացման ծրագրի շրջանակում հունիսի 2-ին տեղի է ունեցել Մեղրիի նոր անցակետի հիմնարկեքի արարողությունը, որին ներկա են զտնվել Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուսամ Բաղդասյանը, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի Երեւանի գրասենյակի ղեկավար Ջորջ Ախալկացին, Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, միջազգային կառույցների եւ այլ պետական մարմինների ներկայացուցիչներ:

Ողջունելով միջոցառման մասնակիցներին՝ ՊԵԿ նախագահ Ռուստամ Բաղդասյանն առանձնահատուկ շնորհակալություն է հայտնել միջազգային բոլոր գործընկերներին, մասնավորապես՝ Եվրոպական միությանը, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկին՝ համատեղ կատարված աշխատանքի համար: Ռուստամ Բաղդասյանն ընդգծել է ոչ միայն միջազգային չափանիշներին համահունչ շենքային պայմանների, այլեւ Մեղրիի արդիականացված անցակետում բովանդակային փոփոխությունների կարեւորությունը: «Մաքսային ծառայության որակը բոլորովին պետք է փոխվի, մենք պետք է տնտեսական անվտանգության պաշտպանության մեր գործառույթը պատշաճ իրականացնենք եւ նպաստենք առեւտրի դյուրինացմանը, մեր գործողություններում նպաստենք Հայաստանում բիզնեսի զարգացմանը եւ նոր բիզնես միջավայրի ձեւավորմանը»,-նշել է ՊԵԿ նախագահը:

ՎԶԵԲ Երեւանի գրասենյակի ղեկավար Ջորջ Ախալկացին բարձր է գնահատել Պետական եկամուտների կոմիտեի հետ փոխգործակցությունը: «ՎԶԵԲ-ն աջակցում է Հայաստանին կապ հաստատել հարեւան երկրների հետ եւ դյուրինացնել առեւտուրը: Սահմանային անցակետի արդիականացումը կնպաստի ենթակառուցվածքների զարգացմանը, աշխատանքային պայմանների բարելավմանը, եւ նոր տեխնոլոգիաների ներդրմամբ գործընթացն ավելի արդյունավետ կդառնա»,-ասել է ՎԶԵԲ Երեւանի գրասենյակի ղեկավարը:

Մեղրիի սահմանային անցման կետի վերակառուցումը եւ արդիականացումն իրականացվում է ԵՄ եւ ՎԶԵԲ-ի միջոցով տրամադրած վարկային եւ դրամաշնորհային միջոցներով: 2020թ. փետրվարի 7-ին Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ ստորագրվել են ընդհանուր 21 146 263 եվրո արժեքով «Մեղրիի սահմանային անցակետի ծրագիր» վարկային եւ դրամաշնորհային համաձայնագրերը՝ ՀՀ ֆինանսների նախարարության ու Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի հայաստանյան գրասենյակի կողմից:

Անցակետի շինարարական աշխատանքներն իրականացնում է միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Թանա էներջի Մենեջմենթ» ընկերությունը (Tana Energy Management Company): Շինարարական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողությունն իրականացնում է «Ռաֆթեն ինթերնեյշնլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Roughton International Limited Company):

Մեղրիի սահմանային անցակետի վերակառուցման եւ արդիականացման շինարարական աշխատանքները կավարտվեն 2026 թվականին, որի արդյունքում կունենանք միջազգային չափանիշներին համահունչ ժամանակակից անցակետ:

Արդյունքում Մեղրիի սահմանային անցակետի գործառույթները լիարժեք ապահովելու նպատակով պայմանագրով նախատեսվում է կառուցել 4000 քմ կառուցապատման մակերեսով երկհարկանի վարչական շենք՝ տանիքում 1500 քմ արեւային էներգակայանով: Անցակետը կունենա մուտքի եւ ելքի ուղղությամբ տրանսպորտային միջոցների մանրամասն զննման, բեռնատար տրանսպորտային միջոցների ռենտգեն զննման եւ մաքսային ձեւակերպումների մասնաշենքեր, ինչպես նաեւ մարդատար տրանսպորտային միջոցների ռենտգեն զննման հարթակ, անասնաբուժական, սանիտարական եւ բուսասանիտարական հսկման կայան ու այլ ենթակառուցվածքներ: Մուտքի եւ ելքի ուղղությամբ յուրաքանչյուրում նախատեսվում է ունենալ 5 ուղեգիծ: Մեղրիի արդիականացված անցակետը հագեցված է լինելու նաեւ գերժամանակակից տարբեր սարքավորումներով, մասնավորապես՝ մարդատար տրանսպորտային միջոցների, ձեռքի ուղեբեռի եւ փոքրածավալ բեռների զննման, մարդկանց սքանավորման համար նախատեսված ռենտգենաճառագայթային, ինչպես նաեւ լաբորատոր սարքավորումներով, UHF ռադիոկայաններով, տվյալների մշակման կենտրոնով, փաստաթղթերի իսկությունը ստուգող սարքերով եւ այլն:

ԼՈՒՐԵՐ

ԾԱԽՄԵՐԸ՝ 2022–ԻՆ

Վարչապետի աշխատակազմը 2022-ին ունեցել է 10 ծրագիր, 52 միջոցառում, տարեկան պլանը կազմել է 19,5 մլրդ դրամ, փաստացի իրականացվել է 20,8 մլրդ դրամ. այս մասին ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում ներկայացրել է ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

Ըստ նրա՝ ճշտված պլանի նկատմամբ դա կազմել է 95,7 տոկոս կատարողական, ինչը 4,4 տոկոսով բարձր է եղել, քան 2021-ին, այսինքն՝ ծախսած փաստացի գումարը:

«Նախագահի աշխատակազմն ունի 1 ծրագիր, իրականացրել է 4 միջացառում, տարեկան պլանը կազմել է 1,6 մլրդ դրամ, այնուհետեւ ճշտված պլանով գումարը նվազեցվել է 1,3 մլրդ դրամ, փաստացի իրականացվել է 1,2 մլրդ դրամի փաստացի ծախս:

Սա ավելի փոքր է եղել, քան 2021-ին ծախսված գումարը:

ԱԺ-ն իրականացնում է 1 ծրագիր եւ 6 միջոցառում, տարեկան պլանը կազմել է 6,3 մլրդ դրամ, փաստացի ծախսվել է 6 մլրդ դրամ, որը կազմել է ճշտված պլանի նկատմամբ 97 տոկոս, ինչը 11,7 տոկոսով ավելին է եղել, քան 2021-ի փաստացի ցուցանիշը»,- ներկայացրել է նախարարը:

ՄԱՐԶԱԳՈՒՅՔ՝ ՖԵԴԵՐԱՑԻԱՆԵՐԻՆ

ՀՀ շուրջ 30 մանկապատանեկան մարզադպրոցների եւ մարզաձեւերի ազգային ֆեդերացիաների անհատույց սեփականության իրավունքով կտրամադրվի մարզագույք, որի ձեռք բերման նպատակով պետական բյուջեից 2023 թ. կհատկացվի 100 մլն դրամ:

Հաշվի առնելով, որ մարզական կազմակերպություններում առկա մարզական գույքը հնանում եւ մաշվում է, մարզական գույքի զգալի մասը արագամաշ գույք է, իսկ որոշ մասը նույնիսկ մեկանգամյա օգտագործման է, ուստի անհրաժեշտություն է առաջանում յուրաքանչյուր տարի շարունակական իրականացնելու ծրագիրը:

Կառավարության որոշմամբ հաստատվել է նաեւ մարզագույքերի բաշխման ցանկը, որը կազմվել է՝ հաշվի առնելով առաջնահերթությունները՝ կազմակերպություններում պարապողների թիվը, մարզական արդյունքները, աշխարհագրությունը եւ այլն:

Այսպիսով՝ մարզագույք կտրամադրվի Վանաձորի աթլետիկայի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոցին, Երեւանի հրաձգության մանկապատանեկան մարզադպրոցին, Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության եւ ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցին, Երեւանի ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոցին, Գյումրու Իսրայել Միլիտոսյանի անվան ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոցին, Արմավիրի մենապայքարային մարզաձեւերի մանկապատանեկան մարզադպրոցին, Թիավարության մարզաձեւերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցին եւ այլն:

Արդյունքում կբարձրանա մարզադպրոցները, մարզակառույցները եւ մարզական հասարակական կազմակերպությունները գույքով ապահովման, մարզական հերթափոխի եւ բարձրակարգ մարզիկների պատրաստման, ինչպես նաեւ ուսումնամարզական գործընթացի որակը, մարզակառույցները կապահովվեն ժամանակակից մարզական գույքով, կբարելավվեն դրանց մարզման պայմանները:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 15 ճՏՊ. 23 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

Team

ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ (IPO)

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) թողարկել եւ

հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխում է բաժնետոմսեր՝ հնարավորություն տալով յուրաքանչյուրին մասնակցել ընկերության զարգացմանը, կատարել ներդրում, կիսել հաջողությունները եւ դառնալ Team-ի բաժնետեր:

Ընկերությունը նախատեսում է տեղաբաշխել 8 միլիարդ 240 միլիոն դրամ ընդհանուր արժողությամբ 40 միլիոն հատ բաժնետոմս: Տեղաբաշխումն իրականացվելու է սույն թվականի հունիսի 7-ից մինչեւ հոկտեմբերի 31-ը ներառյալ:

«Team Telecom Armenia-ն հեռահաղորդակցության ոլորտի առաջին ընկերությունն է, որը Հայաստանում իրականացնում է IPO: Այս քայլով մենք դառնում ենք ավելի բաց ու հանրային, ձեւավորում ենք ավելի թափանցիկ գործելաոճ ու կիսելու ենք մեր

հաջողությունները ինչպես բաժանորդների, այնպես էլ ապագա բաժնետերերի հետ: Թիմային աշխատանքի շնորհիվ վերջին տարիների ընթացքում ընկերությունն ապահովում է ֆինանսական կայուն աճ եւ հաջորդ համարձակ քայլն է անում արդեն

ֆինանսական ոլորտում: Նոր ներդրումների շնորհիվ մեր հավակնոտ ծրագրերն իրականացնելու ենք ավելի արագ՝ միասին զարգացնելով հեռահաղորդակցության, թվային տեխնոլոգիաների ոլորտները եւ երկրի տնտեսությունը»,- նշում է Team

Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը:

Ներգրավված միջոցներն ընկերությունն ուղղելու է Հայաստանի ողջ տարածքում օպտիկամանրաթելային NGN ցանցի ընդլայնմանը, 5G բջջային ցանցի գործարկմանը եւ միջազգային նոր կապուղիների ակտիվացմանը: Աշխատելով թվային տեխնոլոգիաների ոլորտում՝ ընկերությունը նաեւ մեծ ուշադրություն է դարձնելու ժամանակակից թվային գործիքների ու լուծումների ներդրմանը եւ այլ հավակնոտ ծրագրերի իրականացմանը:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի բաժնետոմսերի ազդագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի՝ 2023թ. մայիսի 31-ի Թիվ N 1/288Ա որոշմամբ:

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԱՄՆ ԴԵՍՊԱՆԸ՝ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Քրիստինա Քվինի գլխավորած պատվիրակությանը:

Ժաննա Անդրեասյանը, ողջունելով դեսպան Քրիստինա Քվինին, շնորհավորել է նրան նշանակման առթիվ եւ մաղթել արդյունավետ աշխատանք՝ ի շահ հայ-ամերիկյան բարեկամական կապերի զարգացման՝ համոզմունք հայտնելով, որ նա իր ներդրումը կունենա Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ հարաբերությունների առավել ամրապնդման եւ խորացման գործում:

«Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության ուղղություններով ունենք համագործակցության թե՛ լավ փորձ, թե՛ ավելի մեծ պոտենցիալ: Ուրախ կլինենք միասին աշխատել բոլոր ուղղություններով»,- ասել է ԿԳՄՍ նախարարը՝ ընդգծելով, մասնավորապես, համատեղ իրականացված «Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» ծրագիրը, որն ամփոփվում է այս օրերին:

Ժաննա Անդրեասյանը կարեւորել է նաեւ ԱՄՆ-ի հետ քաղաքացիական կրթության ծրագրերի շուրջ համագործակցության հեռանկարները՝ ընդգծելով, որ այն մեր կրթության բարեփոխումների առանցքում է:

Մշակույթի ոլորտում Ժաննա Անդրեասյանը արժեւորել է հատկապես ԱՄՆ աջակցությունը՝ ուղղված Հայաստանի մշակութային եւ պատմական ժառանգության պահպանմանը, որը, նախարարի գնահատմամբ, առանցքային կետ է երկու երկրների հարաբերություններում: Այս համատեքստում Ժաննա Անդրեասյանը շեշտել է ԱՄՆ դեսպանների մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացված Մեղրիի Փոքր թաղի Սուրբ Հովհաննես (Սբ. Սարգիս) եկեղեցու վերակառուցման ու պահպանության ծրագիրը եւ նշել, որ այժմ աշխատանքներ են տարվում Սանահինի վանական համալիրի եւ Երերույքի տաճարի վերակառուցման ուղղությամբ:

ԿԳՄՍ նախարարը առաջարկել է մշակույթի ոլորտում դիտարկել նաեւ համատեղ փառատոնների ու ցուցադրությունների անցկացման հնարավորությունը՝ հաշվի առնելով երբեմնի լավ փորձը:

ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Քրիստինա Քվինը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ ընդգծել Հայաստանի հետ համագործակցության խորացման կարեւորությունը. «Համատեղ իրականացվում են բազմաթիվ կրթական ու մշակութային ծրագրեր, որոնք իսկապես շատ կարեւոր են: Այդուհանդերձ, համագործակցության ավելի լայն հեռանկարներ կան: Ուրախ կլինեմ շարունակել ձեւավորված լավ ավանդույթներն ու համատեղ արդյունավետ աշխատանքը»:

Կողմերն անդրադարձել են կրթական փոխանակման համատեղ ծրագրերին, անգլերենի ուսուցման մի շարք նախագծերին՝ ուղղված ուսուցիչների եւ դասավանդողների վերապատրաստումներին, գյուղական համայնքներում անգլերենի ուսուցմանը նպաստող համատեղ ծրագրերին:

ԿԳՄՍ նախարարը կարեւորել է նաեւ Հայաստանում ԱՄՆ Խաղաղության կորպուսի կամավորների գործունեության վերսկսումը, որը վերջին տարիներին ընդհատվել էր՝ կորոնավիրուսի համաճարակի իրավիճակով եւ պատերազմով պայմանավորված:

«Համագործակցության տարիների ընթացքում ԱՄՆ Խաղաղության կորպուսի հարյուրավոր կամավորներ են ծառայել՝ աջակցելով անգլերենի դասավանդմանը Հայաստանի տարբեր մարզերում»,- ասել է նախարարը:

Հանդիպման ընթացքում Ժաննա Անդրեասյանն իր մտահոգությունն է հայտնել Ադրբեջանի վերահսկողության ներքո գտնվող տարածքներում հայկական մշակութային ժառանգության պահպանության խնդրի առնչությամբ:

Կողմերը քննարկել են նաեւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր:

ԼՈՒՐԵՐ

ՓԼՎԵԼ Է ՊԱՏԸ

Տիգրան Մեծ պողոտայի նորակառույց շենքերից մեկում շինարարական աշխատանքներ իրականացնելիս վնասվել է մետրոյի «Հանրապետության հրապարակ» կայարանի պատը:

Դեպքը տեղի է ունեցել նախօրեին, առաստաղին հարակից աննշան հատված վնասվել է, փոքր քարաթափում է տեղի ունեցել, ինչն արձանագրվել է մետրոպոլիտենի պահպանության բաժնի կողմից, եւ շենքի շինարարական աշխատանքները կասեցվել են:

Շինարարության հետագա ընթացքը կորոշվի փորձաքննությունից հետո:

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԻՆ

Մետրոպոլիտենն անդրադարձել է կայարանից պատմական Հայաստանի քարտեզը հեռացնելու մեղադրանքներին: «Ի պատասխան հանրության շրջանում առաջացած բողոքի, թե Երեւանի մետրոպոլիտենի «Հանրապետության հրապարակ» կայարանից հանվել է Պատմական Հայաստանի քարտեզը՝ տեղեկացնում ենք, որ քարտեզն ավելի լավ որակով ցուցադրվում է՝ տեղադրված լեդ էկրանի վրա: Միեւնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ քարտեզը հանվել է մետրոպոլիտենի «Հանրապետության հրապարակ» կայարանի կամարից ս.թ. մայիսի 29-ին մաշվածության ու խամրածության պատճառով: Ընդգծենք, որ լեդ էկրանի տեղադրման աշխատանքները տեւել են 2 օր, որից՝ հետո ս.թ. հունիսի 1-ին, կայարանում արդեն իսկ լեդ էկրանի վրա ցուցադրված է եղել քարտեզն ամբողջությամբ»,- ասված է պարզաբանման մեջ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է 3 ԳԻՐՔ

Հայաստանի ազգային գրադարանը (ՀԱԳ) եւ Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանը համատեղ երեք գրքերի շնորհանդես-ֆենարկում է կազմակերպել Ազգային գրադարանում. Լուսինե Աբգարյանի «Հեսիիզոդություն, ֆիկցիա, պատկերապատում, ֆրանսիական արդի գրականության անդրադարձը Հայոց Ցեղասպանությանը» գիտական ուսումնասիրության հիմնահարցերի շրջանակում ներկայացվել են Բրյուսովի համալսարանի շրջանավարս, 44-օրյա պատերազմի մասնակից Տիգրան Գասպարյանի «Հիշողություններ պատերազմից» ինքնակենսագրական պատումը եւ գրող, լրագրող Լիկա Զաքարյանի «44 օր. օրագիր անհետանելի պատերազմից» պատերազմական օրագիրը:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրին Հայաստանի ազգային գրադարանից: ՀԱԳ-ի տնօրեն Աննա Չուլյանի եւ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտոր Դավիթ Գյուրջինյանի ողջույնի խոսքերից հետո համալսարանի դասախոս Լուսինե Աբգարյանը հանգամանորեն խոսել է հիշողության վերաիմաստավորման, վկայությունների, հետանդրադարձերի, հետհիշողության մասին՝ համապարփակ ներկայացնելով թեման: Ըստ աղբյուրի՝ զուգահեռներ անցկացնելով Հայոց ցեղասպանության եւ 44-օրյա պատերազմի ականատեսների վկայությունների միջեւ՝ Լուսինե Աբգարյանը զրույցի է հրավիրել Տիգրան Գասպարյանին եւ Լիկա Զաքարյանին: Լիկա Զաքարյանը պատմել է, որ 44-օրյայի ամբողջ ընթացքում Ստեփանակերտում՝ ռմբապաստարանում, շարադրել է իր ապրումները, խորհրդածությունները, իր միջով անցկացրել տեղի ունեցող իրադարձությունները:

Նա նշել է, թե իր օրագրությունն այնքան անձնականացված է եղել՝ վերջին օրվա ամենօրյա զգացողությամբ, ապրողի անկեղծությամբ, որ հետագայում, երբ առիթ է ունեցել այն թարգմանելու անգլերեն, ինքն իրեն պախարակել է այդքան բաց գրելու համար: Զաքարյանն ընդգծել է, որ իր համար անչափ ծանր է օրագիրը վերընթերցելն ու այդ օրերի արհավիրքը վերապրելը: «Տիգրան Գասպարյանն ականատեսի իր վկայությունները շարադրել է մի շնչով: Ի տարբերություն Լիկայի՝ նա իր գիրքը որերորդ անգամ ընթերցելուց հետո արդեն որպես ուրիշի ստեղծագործություն է ընկալում:

Գրական երկերը մասնակցում են մարդկության դեմ գործված ոճրագործության ժխտողականության մասի իրազեկվածության բարձրացման գործին:

Ավելի քան 100 տարի անց Օսմանյան կայսրության անկման՝ մայրամուտի համապատկերում իրագործված Հայոց ցեղասպանությունը ո՛չ քաղաքական եւ ո՛չ էլ դիվանագիտական առումով անցյալին չի պատկանում:

ՀԱԳ-ի տեղեկացմամբ՝ Լուսինե Աբգարյանը հանգամանորեն ներկայացրել է նաեւ տարբեր ոլորտների՝ պատմաբաններ Ռեյմոն Գեւորգյանի, Թաներ Աքչամի, Իվ Տերնոնի, հոգեվերլուծաբաններ Ժանին Ալթունյանի, Հելեն Փիրալյանի, գրականագետներ Կաթրին Կոքիոյի, Մարիան Հիրշի՝ թեմային նվիրված տեսական դրույթները: «Գրքի առաջին մասը՝ «Ցեղասպանության «ուրվականը». հիշողության հիշողությունը. վկայության, հետհիշողության եւ պատումի խաչմերուկում» վերնագրով, անդրադարձ է «ճակատագրական ժառանգականությանը, որով, առանց իրենց իսկ ցանկության, վերապրողների սերունդներն առնչվում են իրենց ծնողների/նախնիների պատմական հոգեցնցմանը:

Գրքի երկրորդ՝ «Պատմության, ֆիկցիայի եւ հանձնառության խաչմերուկում» մասում մենք հայտնվում ենք պատմության՝ իրական անցյալի եւ ֆիկցիոնալ աշխարհների խաչմերուկում: Պատմական անցյալը ներկայացնելը սերտորեն առնչվում է ֆիկցիային, իսկ այս վերջինն իր կանոնների միջոցով փորձում է հնարավորինս մոտենալ անցյալին: Այս մասում հեղինակը կենտրոնանում է վեց երկերի վերլուծության վրա, որոնց հեղինակներից երեքը՝ ֆրանսիացի, երեքը ծագումով հայ ֆրանսագիր արձակագիրներ են:

Ուսումնասիրության երրորդ՝ «Պատկերապատումը եւ Ցեղասպանությունը» մասում Լուսինե Աբգարյանը անդրադառնում է գրաֆիկական պատումին՝ լուսանկարչությանը, ցեղասպանության թեմայի արվեստի լեզվով մատուցմանը՝ կինոյին եւ երաժշտությանը»,- հայտնում են ՀԱԳ-ից:

ԱՐԺԱՆԻ ՄԵԿԸ

ԽԱՉԱՏՐՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ՝ ԿԱՄԵՐԱՅԻՆՈՒՄ

Խաչատրյանական տարվա արժանի մեկնարկ՝ Կամերային երաժշտության ազգային կենտրոնում:

ՀՀ վաստակավոր արտիստ, անվանի դաշնակահար Հայկ Մելիքյանը հունիսի 14-ին հանդես է գալու բացառիկ ծրագրով՝ ներառելով խաչատրյանական գլուխգործոցներ, դաշնամուրային փոխադրումներ, ինչպես նաեւ Խաչատրյանի արվեստի վրա անշեջ հետք թողած աշուղական երաժշտության դաշնամուրային մեկնաբանություններ եւ հայ դասականների գոհարներ: Համերգը տեղի կունենա հունիսի 14-ին՝ ժամը 19:30-ին, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը: «Խաչատրյանը մի ողջ դպրոց է ու ազգային ինքնություն. նա խոսեց հայերեն, բայց նրա լեզուն հասկացավ ողջ աշխարհը: Այս հայեցակարգը մտքումս՝ պատրաստել եմ հատուկ մի ծրագիր՝ նիրված մեծ կոմպոզիտորի 120-ամյակին: Սրտումս առանձնահատուկ թրթիռ է եւ մեծ պատասխանատվություն:

Հունիսի 14-ը զուտ մենահամերգ չէ, այլեւ մի ողջ տոնախմբություն»,-նշում է Հայկ Մելիքյանը:

ԼՈՒՐԵՐ

ԵՐԳ՝ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ

Ամառ է Երեւանում, եւ այս առիթով Արամ շբՅ-ն ու Գարիկ Մարտիրոսյանը մեր «pink-ագույն» մայրաքաղաքին, երեւանցիներին ու մեր հյուրերին ամառային զովացնող երգ են նվիրել, որը, գուցե, դառնա այս ամռան հիթերից մեկը: Այն պատմում է, թե որքան շոգ է լինում Երեւանում ամռանը, բայց, չնայած դրան, միշտ ձգում է բոլորին.

«Հյուսիսային պողոտան անունը չի արդարացնում,

Հանվացնում ա արեւն ու եռման ասֆալտին ա պառկացնում,

Էս շոգից նույնիսկ ծառերը հով ու ստվեր են ման գալիս,

Միեւնույնն ա, Երեւանը ձգում ա ինչպես մագնիս»:

«Ամառ է Երեւանում» երգն արտիստները ներկայացրել են առանց տեսահոլովակի, բայց հետաքրքիր լուծումներով: Երգի երաժշտության հեղինակը Գարիկ Մարտիրոսյանն է: Ռուսական շոու-բիզնեսում հայտնի մեր հայրենակիցը խոսքերը համահեղինակել է Արամ շբՅ-ի եւ Վարդան Զադոյանի հետ: Գործիքավորումը կատարել է Արման Փահլեւանյանը, միքսը՝ Նիկ Էգիբյանը: YouTube-ում երգը տեղադրվել է մեկ օր առաջ, եւ այս պահի դրությամբ ունի ավելի քան 45 000 դիտում:

ՄԵԴԱԼՆԵՐ՝ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Հունահռոմեական ոճի ըմբիշները 3 ոսկե, 4 արծաթե, 9 բրոնզե մեդալ են նվաճել Բենուր Փաշայանի միջազգային հուշամրցաշարում: Մրցաշարին Հայաստանի եւ եւս 5 երկրի՝ Ռուսաստանի, Բուլղարիայի, Բելառուսի, Վրաստանի եւ Իրանի ներկայացուցիչներ են մասնակցել:

Հուշամրցաշարի հաղթողի կոչմանն արժանացել են 67 կգ քաշային Սլավիկ Գալստյանը, 72 կգ քաշային Շանթ Խաչատրյանը եւ 82 կգ քաշային Մաքսիմ Մանուկյանը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալն առանձնացրել է հատկապես աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն Մաքսիմ Մանուկյանի ելույթները, որը, տեւական դադարից հետո վերադառնալով ըմբշամարտի մրցագորգ, եզրափակչում տպավորիչ հաղթանակ է տարել ու դարձել ոսկե մեդալակիր:

«Մեր ըմբիշների համար սա ստուգողական մրցաշար էր: Անձամբ ինձ շատ ուրախացրեց Մաքսիմ Մանուկյանն իր հրաշալի գոտեմարտերով: Երկար դադարից հետո վերադառնալ 34 տարեկանում ու այդպիսի գոտեմարտեր հաղթել, իսկ եզրափակչում ֆանտաստիկ հնարքով ետ բերել գրեթե կորած գոտեմարտը, պարզապես հիանալի էր: Հուսամ՝ դեռ ասելիք ունի ու մեծ հաջողությունների կհասնի:

Տպավորիչ ելույթներ ունեցան նաեւ Շանթ Խաչատրյանն ու Սլավիկ Գալստյանը»,- նշել է Կարեն Գիլոյանը:

● *Հունիսի 4-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Մորգանի խնամին» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՍՅՈՒՆԻՔ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է իրականացվում մարդու իրավունքների պաշտպանի մոտ ընդունելությունը:
Աննա Մարտիրոսյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացիների ընդունելություն իրականացնում է ինչպես Մարդու իրավունքների պաշտպանը, այնպես էլ իր աշխատակազմի ներկայացուցիչները:

Նախքան Պաշտպանի մոտ քաղաքացու ընդունելության կազմակերպումը Պաշտպանի հանձնարարությամբ վերջինիս համար ընդունելություն կազմակերպում է դիմում-բողոքի քննարկման ընթացակարգն ապահովող աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման ղեկավարը:

Մարդու իրավունքների պաշտպան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ստորաբաժանման ղեկավարը, ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից, ինքն է որոշում քաղաքացու ընդունելության կազմակերպումը Պաշտպանի մոտ:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

ՀԱՐՑ. Տնտեսագիտական համալսարանի հանգստյան տնից ովքե՞ր եւ ինչպե՞ս կարող են օգտվել :
Արմեն Օսեյան (20 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դիլիջանում գտնվող Տնտեսագիտական համալսարանի «Տնտեսագետ» մարզաառողջարանը ստեղծվել է որպես մարզաառողջարանային ճամբար, բայց 2012 թվականի հունվարին ստացել է մարզաառողջարանի կարգավիճակ:

ՀՊՏՀ ղեկավարության ջանքերով մարզաառողջարանում ամեն տարի նորոգման ու բարեկարգման աշխատանքներ են կատարվում, հետզհետե հանգստի համար ստեղծվում են հարմարավետ պայմաններ: Մարզաառողջարանը գործում է ամռանը՝4 հերթափոխով, որի ընթացքում այստեղ մատչելի պայմաններով իրենց հանգիստն են անցկացնում ՀՊՏՀ հարյուրավոր ուսանողներ եւ աշխատակիցներ: Կազմակերպվող մարզական ու մշակութային բազմաբնույթ միջոցառումները հանգստացողների առօրյան դարձնում են անմոռաց ու հիշարժան:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ուղեգրի արժեքը ՀՊՏՀ աշխատակիցների եւ ուսանողների համար 35 հազար դրամ է, իսկ ՀՊՏՀ աշխատակիցների եւ ուսանողների ընտանիքների անդամների համար՝40 հազար դրամ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝համացանցից

Աջափնյակ վարչական շրջանում տեղադրված նոր կանգառասրահներից երկուսի ապակիները կոտրել են: Աջափնյակ վարչական շրջանի կողմից փաստի առթիվ գրություն է ուղարկվել ՀՀ ոստիկանության բաժանմունք՝ մեղավորին հայտնաբերելու եւ պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 5 + 8 +18 + 22
Կոտայքի լեռներ	+ 8 + 11 +18 + 20
Կոտայքի նախալեռներ	+13 + 16 +24 + 26
Գեղարքունիք	+ 7 + 11 +18 + 21
Լոռի	+11 + 16 +21 + 26
Տավուշ	+13 + 18 +25 + 29
Արագածոտնի լեռներ	+ 7 + 11 +18 + 20
Արագածոտնի նախալեռներ	+12 + 16 +23 + 28

Արարատ	+15 + 17 +28 + 30
Արմավիր	+13 + 16 +27 + 29
Վայոց ձորի լեռներ	+ 7 + 10 +17 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+15 + 17 +25 + 28
Սյունիքի հովիտներ	+17 + 21 +27 + 31
Սյունիքի նախալեռներ	+10 + 15 +21 + 24
Արցախ	+17 + 20 +26 + 29
Երեւան	+ 14+ 16 +26 + 28

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **2.6.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*